«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Սաթենիկ Մամաջանյան

Ուսումնական հաստատություն՝ Ճոճկանի Գոռ Խուդինյանի անվան մ/դ

Երևան 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ
«ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն..... 3

Ներածություն..... 3

Գլուխ. 1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում.....3

1.2 «Գրականություն» առարկայի ազդեցությունը սովորողների արժեհամակարգի զարգացման վրա.....18

Եզրակացություններ..... 24

Օգտագործված գրականության ցանկ.....24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Առարկայական կրթական չափորոշիչները ուսումնական գործընթացում սահմանում են սովորողների արժեհամակարգի ձևավորումը ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի, այլև սեփական կենսափորձի ուսումնասիրության հիման վրա: Աշակերտների արժեհամակարգը ձևավորելու, նրանց բարձր մարդկային որակներով օժտելու լայն հնարավորություններ է

ստեղծում գրականությունը: Առհասարակ, բարոյական սկզբունքների վրա ձևավորված արժեհամակարգը առանցքային նշանակություն ունի թե' անհատի, թե' հասարակության համար:

Հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացը չի կարող բնականոն առաջ գնալ, եթե կարևորություն չտրվի աշակերտների դաստիարակության հիմնախնդրին: Ժամանակակից մարտահրավերներով պայմանավորված՝ խնդիրը հաճախ դժվար լուծումներ ու միջամտություններ է պահանջում, այնուամենայնիվ, դպրոցի մանկավարժական կոլեկտիվը կառուցողական ու արդյունավետ համագործակցության արդյունքում կարողանում է համակարգված մոտեցումներ առաջ բերել՝ ամեն կերպ կարևորելով կիրթ, մարդասեր, հոգևոր արժեքներով հարուստ, ակտիվ, բարձր բարոյականության տեր, իր հայրենիքը սիրող սերունդ: Ուսուցչի ուղղորդմամբ աշակերտը պետք է գա այն գիտակցման, որ յուրաքանչյուր ուսումնական առարկա ունակ է իրեն տալ բարձր բարոյական արժեքներ ու մարդկային որակներ:

«Հայ գրականություն» առարկայի ուսուցչի վրա ևս մեծ պատասխանատվություն է դրված, քանի որ գեղարվեստական գրականության մեջ կարելի է գտնել մի շարք հարցերի պատասխաններ, կարելի է սովորողներին առարկայական ու տեսանելի կերպով մատնացույց անել կյանքի լավ ու վատ կողմերը, մարդկային տեսակի ընդունելի ու դատապարտելի առանցքները:

Այդպիսի օրինակներով հագեցած դասերը կարող են սովորողների համար դառնալ խոսուն վկաներ, ցույց տալ կյանքի կարմիր գծերն ու նպաստել վեհ արժեքների ու բարոյական նորմերի ամրապնդմանը վերջիններիս դաստիարակության ընթացքում:

Գրականության ուսուցչը, գեղարվեստական գրականության մնայուն արժեքների, կարկառուն գրողների կյանքի ու գործունեության անթերի պատումները վկայակոչելով, կարող է աշակերտի մոտ ձևավորել արժեքային համակարգ, որի հիմքը բարությունն է, ազնվությունն ու բարոյականությունը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հաշվի առնելով նոր աշխարհի մարտահրավերները՝ կարծում ենք, որ գրականության ուսուցիչը շատ անելիք ունի աշակերտների արժեհամակարգը բարձր մակարդակի վրա դնելու առումով: Գրողի, հասարակական ու ազգային գործչի վաստակը կարող է սովորողների համար

դառնալ հայրենասիրության, մարդասիրության, բարոյական բարձր արժեքների ձևավորման օրինակ, ուստի հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորում ենք գրականության դասին սովորողների մեջ բարձր ու վեհ մարդկային որակներ սերմանելու անհրաժեշտությամբ:

Հետազոտության խնդիրը: Ցույց տալ գրականության դերը սովորողի կյանքում, ընդգծել առարկայի օգնությամբ սովորողներին ճիշտ ուղղորդելու և արժեքային համակարգ ձևավորելու անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը՝

- Ուսումնասիրել գրականության միջոցով սովորողների մոտ բարձր արժեքներ դաստիարակելու հնարավորությունները:
- Հիմնվելով մեծանուն հայ գրողների պատգամների վրա՝ դիտարկել գրականության արդյունավետությունը՝ որպես սովորողներին դաստիարակելու միջոց:
- Վերլուծել սովորողների մեջ արժեհամակարգի ձևավորման գործում գրականության ուսուցչի դերը:

Գլուխ. 1 ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ «ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1.1 Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը դպրոցում

Սովորողների կարողունակությունների ձևավորման ու գիտելիքների ընդլայնման կողքին դնում ենք նաև վերջիններիս արժեքային համակարգը: Չափազանց կարևոր է արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ: Զարգացած մշակույթներն ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Հենց այս պատճառով էլ առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ ազատությունները իրենց հետ

մեծ վտանգներ են բերում: Ադուհանդերձ, առանց արժեքային համակարգի անհնար է ապրել բնականոն ձևով, պահպանել բարեվարքություն, նույնն ակնկալել դիմացինից, ուստի ուսումնական գործընթացում արժեքային համակարգի ձևավորումը խիստ կարևոր ենք համարում: Արժեքային համակարգի ձևավորումն անհնար է պատկերացնել հասարակությունից, մարդկանց հետ շփումից զատ: Անձի արժեքների համակարգը ձևավորվում է սոցիալականացման ընթացքում ինտերիորիզացիայի (ներքնայնացման)՝ հասարակական-քաղաքական, բարոյական, գեղագիտական իդեալների (հասարակական փորձ և մշակույթ) յուրացման միջոցով, որոնք բնորոշ են տվյալ սոցիալական հանրությանը[1]:

Կրթութական համակարգի հենքը աշակերտի արժեհամակարգի ձևավորումն է: Չունենալով արժեհամակարգ՝ աշակերտը չի կարող հասկանալ կրթության հարկը, սովորելու, գիտելիք կուտակելու իմաստը: Առանց արժեքային կամ թերի արժեքներով մարդը չի կարող դառնալ հասարակության լիիրավ անդամ, ունենալ նախասիրություններ ու հետաքրքրություններ, բարոյական նկարագիր: Նման մարդը չի կարող պատկերացնել հայրենիքի, ընտանիքի, ծնողի արժեքը:

Երեխան, դեռահասը, պատանին իր կյանքի ձևավորման ամենակարևոր շրջափուլերն անց է կացնում դպրոցում, ուստի դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Կյանքի տարբեր ոլորտների նկատմամբ վերաբերմունքը մարդու մեջ ձևավորվում է նաև կրթության ընթացքում ստացած տեղեկատվության միջոցով: Կրթության սոցիալական ինստիտուտի միջոցով իրականանում է արժեքային մշակույթի փոխանցումը սերնդեսերունդ: Հիմնականում դպրոցն է իր վրա վերցնում պատասխանատվություն հանրության մեջ տարածված արատները դադապարտելու համար, պայքարում՝ դրանք արմատախիլ լինեն սովորողների արժեքային համակարգից, ցույց տալիս սովորողին օրինակելի լինելու առավելությունները:

[1] https://www.bok.am/sites/default/files/2020-12/2.pdf Ն. Զեյնալյան, «անձի արժեհամակարգի ձեվավորման աշխարհայացքային նախադրյալները»:

Գեղարվեստական ստեղծագործությունների զանազան օրինակների միջոցով ուսուցիչն աշակերտի համար տեսանելի է դարձնում մարդկային բարությունը, լավ ու վատ հատկանիշները, դրանց հետևանքները, բնագիտական առարկաների դասաժամերին գիտնականների ու մտածողների կյանքն է օրինակ բերվում, ինչը նաև մոտիվացնող է, իսկ ինֆորմատիկայի դասին կարելի է բազմաթիվ օրինակներ բերել, որոք կարող են արժեհամակարգ ձևավորել, քանի որ այս գիտությունն այսօր ամենուր է ՝ թե' դրական, թե բացասական դրսևորումներով:

Մարդկային բարձր արժեքները շատ կարևոր են եղել մարդկային հասարակության համար հնուց ի վեր, այդպես է և այսօր: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Դ. Լեոնտևը նշում է, որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց փոխակերպումների, այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ[2]:

Կարող ենք վստահաբար պնդել, որ աշակերտի արժեհամակարգի հիմնական մասի ձևավորման համար պատասխանատու է դպրոցական միջավայրը, քանի որ այստեղ է տեղի ունենում նաև սովորողի իմացական առաջընթացն ու կարողունակությունների զարգացումը, իսկ դրանք մեծապես կապված են արժեքային համակարգի հետ և փոխլրացնում են միմյանց: Կրթական տարբեր աստիճաններում սովորողն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական

[2] Д. А Леонтев, «Развитие личностных ценностей в общественном контексте» Вестник Московского Университета,1997. №1. сс. 20-27.

տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում:[3]:

Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը: Այս առումով կրկին պետք է առանձնացնել դպրոցի անուղղակի և ուղղորդված ներգործությունը, ինչը միտված են սովորողի արժեհամակարգի զարգացմանը: Հանրակրթության նպատակները և պետական քաղաքականության սկզբունքները սահմանում են, որ հանրակրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական կրթության նախապատրաստմանը: Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հետևյալ սկզբունքների ապահովումը. հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը[4]:

Աշակերտի արժեհամակարգի վրա մեծապես ազդում է նաև սոցիալական միջավայրը: Հարմարվելով, ինտեգրվելով և անհատականանալով սոցիալական միջավայրում՝ աշակերտը կարող է իր հերթին ազդեցություն ունենալ օրինակ դասընկերների վրա՝ տալով նրանց արժեքային դիրքորոշումներ: Ուստի շատ

[3] https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf Ի. Փարեմուզյան, «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում», էջ 397:

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5:

կարևոր է սոցիալական միջավայրի մղումները, ձգտումները, կողմնորոշումը, քանի որ բացասական ազդակները նույնպես կարող են ազդել սովորողի արժեքային համակարգի վրա: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմոնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն[5]: Օրենսդրական դաշտում ևս կան հստակ նկատառումներ, թե ինչպիսին պիտի լինի սովորողի արժեքային համակարգը, համաձային որոնց՝ արժեքային համակարգի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

- ա. գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,
- բ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- գ. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,
- դ. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,
- ե. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,
- զ. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,
- է. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

[5] Վ. Ա Սուխոմլինսկի, «Սիրտս նվիրում եմ երեխաներին», Երևան, 1977, էջ 317:

- ը. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,
- թ. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,
- ժ. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,
- ժա. դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,
- ժբ. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում[6]:

Կատարենք եզրահանգում առ այն, որ աշակերտի արժեքային համակարգի հիմքը դրվում է ընտանիքում, ապա կատարելագործվում է դպրոցում: Դասապրոցեսը, դասընկրների հետ շփումներն իրենց ազդեցությունն են թողնում անձի հետաքրքրությունների շրջանակի, դիրքորոշումների, համոզմունքների վրա, ուստի այս տեսանկյունից կարևոր է ուսուցչի ուղղորդումը, լավի ու վատի պատկերավոր ցուցադրումը դասի բովանդակային կառուցվածքի մեջ: Առանձնակի նշանակություն ունի ընտանիքի դերակատարումը: Բարձր բարոյական, մարդասիրական արժեքներով սնվող ընտանիքներում երեխաները կրում են այդ արժեքները, այլոց համար ևս օրինակ դառնում, իսկ հակառակ պարագան իր մեջ մեծագույն վտանգներ է պարունակում, քանի որ այս դեպքում ամեն բան մնում է բացառապես դպրոցի ուսերին:

Երեխաների դաստիարակությունը բարդ, պատասխանատու, բայց շնորհակալ և հետաքրքիր զբաղմունք է: Եվ նրա նշանակությունը չի կարելի չգնահատել, չի կարելի ինքնահոսի թողնել, կամ ամբողջովին վստահել մանկապարտեզին ու դպրոցին: Դեռևս նախնադարյան հասարակության մեջ տոհմը, մարդկային հանրությունը երեխաների դաստիարակությունը հանձնարարում էին առավել

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923 ՀՀ Կառավարության որոշում

խելացի, փորձառու, ուժեղ մարդկանց, որոնք արդեն հատուկ կերպով, հատուկ պայմաններում, քիչ թե շատ հետևողականորեն կազակերպում էին տվյալ հանրության երեխաների, աճող սերնդի զարգացումն ու ձևավորումը: Դաստիարակությունը նպատակաուղղված ներգործություն է երեխաների ու երիտասարդության գիտակցության ու վարքի, նրանց աշխարհայացքի, արարքների, սովորույթների վրա: Հենց դաստիարակությամբ էլ նշանակալի չափով պայմանավորվում են այն փոփոխությունները, որ կրում է մարդը ծնվելու պահից մինչև հասուն դառնալը[7]:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ դպրոցի դերն անգնահատելի է մատաղ սերնդի մեջ արժեհամակարգի ձևավորման գործընթացում, ինչին յուրաքանչյուր ուսուցիչ պետք է մոտենա ամենայն պատասխանատվությամբ:

1.2 «Գրականություն» առարկայի ազդեցությունը սովորողների արժեհամակարգի զարգացման վրա

Ուսուցման դաստիարակչական ներգործությունն անխուսափելի է, որովհետև սովորողներին գիտելիք հաղորդելուն զուգահեռ, յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի պարտականությունն է նաև աշակերտներին համակողմանի դաստիարակելը: Դաստիարակությունը հոգեխթանիչ գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում անձի ձևավորման գործում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական նպատակները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական տարաբնույթ խնդիրներ, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

[7] http://www.hogeban.info/

Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց, այլ խոսքով՝ նրանց մոտ ձևավորվում են կոլելտիվում աշխատելու հմտությունները: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Համագործակցային ու փոխգործուն մեթոդները սովորողների մեջ դաստիարակում են դժվարությունները միասին հաղթահարելու, խնդիրները միասնական լուծելու հմտություններ:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է, և ուսուցիչն ունի բազմաթիվ գործիքներ դասապրոցեսի ընթացքում սվորողների մեջ արժեհամակարգ ձևավավորելու համար:

«Գրականություն» ուսումնական առարկայի դասաժամը նույնպես լավ հնարավորություններ է տալիս ուսուցչին դրական ու արժեքավոր սերմեր տալ սովորողին: Այս առարկայի դասերին ուսուցիչը պետք է փորձի համագործակցային հարաբերությունների միջոցով նախ և առաջ ձևավորել ստեղծագործական ու քննադատական մտածողություն, գեղարվեստական գրականությունից վերցված կյանքի այլևայլ իրավիճակների օգնությամբ սովորողներկի համար ստեղծել այնպիսի իրավիճակներ, որոնցում վերջինս ստիպված է մտածել, որոնել, փնտրել, դասդասել, հատկանշավորել, կարծիք ու դիրքորոշում հայտնել:

Գրականությունը խոսքի արվեստ է, գրական երկի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու և վերլուծելու տեքստի ենթիմաստը, հեղինակի ասելիքը, գրողի՝ տեքստ սըեղծելու վարպետությունը, խոսքի ոճական առանձնահատկությունները, պատկերավոր խոսքի գեղագիտությունը: Գրական

տեքստի համակողմանի ուսումնասիրության ընթացքում զարգանում են սովորողի քննական-դատողական և պատկերավոր մտածողությունը, վերլուծելու, համադրելու, ընդհանրացնելու, եզրահանգումներ անելու կարողությունը:Գրականության ուսումնասիրության նպատակը սովորողին հայերեն խոսքի գեղագիտությանը, պոսքի արվեստին հաղորդակից դարձնելն է: Հայ հգրականության երկերի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս զարգացնել սովորողի բառապաշարը, պատկերավոր մտածողությունը, երևակայությունը, ստեղծագործական կարողությունները, ձևավորել գրական ճաշակ և ընթերցասիրչություն[8]:

Առարկայի պրակտիկ ուղղվածությունը ձևավորում է ստացված գիտելիքներն ու հմտությունները առօրյա կյանքում օգտագործելու կարողություն, երբ ասենք դերախաղի միջոցով սովորողը մտնում է կերպարի մեջ՝ հնարավորություն ստանալով իր կարծիքը, իր ճիշտը արտահայտելու:

Գրականության դասավանդման շրջանակներում դաստիարակության խնդիրը պետք է հիմնված լինի մարդկային գործոնի՝ գաղափարի օգտագործման վրա: Ուսուցչի դիրքորոշումը, նրա գիտելիքների ու հետաքրքրությունների լայնույթը, խոր համոզմունքով և հուզականորեն հագեցած ուսումնական նյութի շարադրման բարձր մակարդակը շատ առումներով կապահովեն ուսուցչի դաստիարակչական աշխատանքի հաջողությունը: Կարևոր է սովորողներին ծանոթացնել աշխատանքի արդյունքները մարդկանց պրակտիկ կարիքներին ծառայեցնելուն, գրական կերպարների օգնությամբ վերջիններիս մոտ ձևավորել բարձր քաղաքացիականությանը պատկերացումներ, ցույց տալ անձի բարոյական հիմքերի առաջնահերթությունը, ամրապնդել սովորողների ռազմահայրենասիրական, գեղագիտական, հոգևոր դաստիարակության հիմքերը, զարգացնել հուզականարժեքային մտածողություն:

Մեր բազմադարյան գրականության կենսափորձը, գրողների ու բանաստեղծների ազնիվ, հայրենասիրական ու մարդասիրական մղումները, որոնք արտացոլվել են նրանց երկերում, միշտ էլ ունեցել են դաստիարակչական

[8] https://escs.am/files/files/2021-05-06/1d10dc19d7adbb902d7a2ee54481cbc8.pdf «Հայ գրականություն»մ առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագիր:

նշանակություն: Այսօր էլ սովորողների արժեհամակարգի հիմքը պետք է կառուցել հայ մեծ գրողների՝ սերունդներին տված պատգամների առանցքում: Գրականության մեջ բազմաթիվ են առարկայական այնպիսի դրվագները, որոնք սովորողներին մտածելու ու խորհելու առիթ կտան: Հանրակրթական դպրոցի կրտսեր և միջին օղակներում իրենց դաստիարակչական ու բարոյախրատական դերով անփոխարինելի է առակի ժանրը: Ելնելով գրական այս տեսակի ժանրային առանձնահատկություններից՝ վստահաբար կարող ենք պնդել, որ աշակերտը բազմաթիվ անգամներ առիթ է ունենում համոզվելու, թե լավ ու բարի մարդկային հատկանիշները որքան կարևոր ու պետքական են:

Պակաս կարևոր չէ հայ գրականության հայրենասիրական մոտիվը: Խ. Աբովյան, Ռաֆֆի, Ստեփան Զորյան, Դ. Դեմիրճյան, մեծանուն այս գրողների պատմական վերպերը դարեր ի վեր սերունդների մեջ ձևավորել են ազգասիրական ու նվիրական զգացմունքներ դեպի հայրենիքը: Ազգասիրությունն ուղղակի հորդում է մեծ մանկավարժ Աբովյանի «Վերք» Հայաստանի վեպից: Հայրենասիրական գաղափարների առաջամարտիկներ Թումանյանը, Իսահակյանը, Շիրազն ու Կապուտիկյանը նույնպես սերունդներին ավանդել են հայրենիքը սիրելու և պաշտպանելու պատգամը: Հայրենաճանաչության և հայրենիքի գաղափարն ավելի ռոմանտիկական են ցույց տվել «Կարոտի գրականության» երգիչները, օտարագիր ու սփյուռքահայ գրողները: Մարդկային հոգու խառնիճաղանջ ու ըմբոստ գրիչ է ունեցել Չարենցը, ով իր ընթերցողին սովորեցնում է լինել համառ, պայքարող ու ազնիվ:

Սերը դեպի մայր ծնողը ծաղկեցրել ու համամարդկային նշանակության են հասցրել Հովհ Շիրազը, Վ. Տերյանը: Տերյանական շունչը հատկապես գերող է դեռահասների համար: Ժամանակին Տերյանով շնչում էր մի ողջ երիտասարդություն: Նրա խոսքն այսօր էլ արդիական ու դաստիարակող է: Մարդկային հոգու երգն էլ սովորողներին փոխանցում են Պ. Սևակն ու Համո Սահյանը: Այս մեծերն, անշուշտ, երգում են նաև հայրենիքը, մորը՝ կյանքի պատգամներ տալով սերունդներին:

Հայ գրականության դասին սովորողների արժեհամակարգի ձևավորման

գործում անկյունաքրային դեր ու առաքելություն ունի Թումանյանի գրիչը: Մեծն Թումանյան ինքն էր օժտված մեծագույն մարդկային, բարոյական, հումանիստական, ազգասիրական արժեքներով, և անհնար է այս արժեքները չնկատել իր իսկ ստեղծագործություններում: Բանաստեղծն ասում էր. «Մենք ունեցանք սեփական ազգային դպրոց ու գրականություն, որ խաղաղ օրերում ոսկեդար է ստեղծել մեզ համար, իսկ դժբախտության օրերում ճանապարհ է ցույց տվել դեպի լավագույն ապագա՝ լուսեղեն սյունի նման»:

Թումանյանի գրական անգին ժառանգության մեջ առանցքային տեղ են գրավում դպրոցին, ուսուցչին և մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության վերաբերող հարցերը, որոնց մոջ բարձրացված գաղափարներն այսօր էլ պահպանում են իրենց արդիականությունը: Թումանյանի համար աներկբա էր, որ կրթության ու դաստիարակության գործում վճռական դեր է կատարում ուսուցչի դրական օրինակը, ուստի ամենից առաջ ինքը մանկավարժը պետք է օժտված լինի մարդկային արժանապատվությամբ, ունենա խոր ու հաստատուն գիտելիքներ: «Ուսուցիչը դպրոցին հոգի ներշնչողն է, նրա պատիվը, նրա փառքը»,- ասում է Թումանյանը: Իր գեղջուկ հերոսների մեջ էլ նա հայտնաբերել է հավերժ մարդկային ու ընդհանրական հատկանիշներ՝ հաստատելով այն ճշմարտությունը, որ արվեստում ու գրականության մեջ համամարդկայինն ստեղծվում է ազգայինի միջոցով: Հովհ. Թումանյանի հայկականության իր զգացողության մասին սքանչելի է ասել Ստեփան Զորյանը. «Նրա ստեղծագործության մեջ ես միշտ զգում եմ հայրենի հարազատություն, հայրենի երկրի ու բնության պատկերը, հայրենի դաշտերի ու լեռների բուրմունքը, հայ ժողովրդի ապրած խոր վշտերն ու կարճատև խնդությունները և, վերջապես, մեր մայրենի լեզվի պարզ, վճիտ ու տիրական ձայնը, որն ինձ հիշեցնում է մեր լեռներից իջնող և իր շուրջը հաճելի զովություն ու կենդանություն առաջացնող շողշողուն մի վտակ[9]»:

Անշուշտ, մեծանուն գրողների պատգամները աշակերտների մոտ ապրելակերպ, բնավորություն, արժեհամակարգի բաղադրիչ դարձնելու առումով մեծ է ուսուցչի՝ որպես ուղղորդողի, դաստիարակողի դերը: Ուսուցիչը պետք է սովորողին չպարտադրի կարծիք կամ դիրքորոշում: Բնագրի ընթերցումից հետո սովորողն ինքը պետք է հնարավորություն ունենա տեսնել դրական ու բացասական հերոսներին,

[9] Ստեփան Զորյան, «Իմ Թումանյանը» (հոդվածներ, ելույթներ, հուշեր), Երևան, 1969:

պախարակվող ու գովաբանվող մարդկային որակները, կյանքի լավ ու վատ կողմերը: Գրական երկը որպես դաստիարակչական գործիք օգտագործելու համար՝ գրականության ուսուցիչն անդադար պետք է հնարավորություն տա, որ սովորողն ունենա կարծիք, տեսակետ հայտնելու հնարավորություն: Վերլուծելով ստեղծագործության սյուժեն, գաղափարը, հերոսներին՝ սովորողները կարողանում են ժամանակի և իրականության սահմանները ջնջել, իրենց դնել հերոսի փոխարեն, ավելի խորքային վերլուծել նրանց քայլերը և ստանալ բարձր մարդկային արժեքների օրինակեր:

Այստեղ կարևոր է աշակերտակենտրոն մոտեցումները: Գրականության դասի առանցքային սուբյեկտը պետք է լինի աշակերտը: Ուսուցչի խոսքը պետք է լինի կողմներոշող, բայց չպարտադրի սեփական կարծիքը: Վեննի դիագրամի, երկսյուն կամ եռասյուն աղյուսակների միջոցով սովորողները կարող են հատկանշավորել հերոսներին, գտնել դրական ու բացասական հատկանիշները, դերախաղի միջոցով հարցեր ուղղել գլխավոր կերպարներին: Արդյունքում՝ ուսուցիչը, ուսումնական նյութի ուսուցմանը զուգահեռ, սովորողների մեջ դաստիարակում է բարոյական բարձր արժեքներ: Ուսուցչի խնդիր այս պարագայում էլ նույնն է. հեղինակի խոսքը հասցնել սովորողին՝ թույլ տալով, որ վերջինս ինքնուրույն եզրահանգումներ կատարի, գտնի ստեղծագործության լավ ու վատ կողմերը: Գրականության դասին կատարած վերլուծությունները աշակերտներին հնարավորություն են տալիս նաև կատարելագործել խոսք կազմելու կարողությունը՝ ճիշտ և գրագետ համադրելով լեզվաքերականական միավորները, կիրառելով հայոց լեզվի ոճական առանձնահատկությունները:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հասարակության առանցքը առողջ, արժեհամակարգ ունեցող, մարդասեր ու կառուցողական քաղաքացին է: Կարծում ենք՝ ուսումնադաստիարակչական գործընթացը գործի է դնում իր ողջ մարդկային ներուժը՝ հմուտ ուսուցիչներին, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացին լինի հենց այդպիսին: Իսկ այդ բարդագույն խնդրի լուծման ճանապարհին «Հայ գրականություն» առարկան՝ ի դեմս մեր հանճարների պայծառ մտքերի, իսկական օգնություն է ուսուցչին, քանի որ դրանք իրենց մեջ ունեն վեհ գաղափարների գովերգումը, վատի ու արատավորի դատապարտումը, մարդկային ստորության և

մարդկային հանճարեղության պատկերավոր արտացոլումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն հետազոտության արդյունքում եկանք այն եզրահամգմանը, որ ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաչ կատարումից: Գրականության ուսուցիչը պետք է ուղղորդի սովորողին, որպեսզի վերջինս ճիշտ կողմնորոշվի, որևէ կերպ չպետք է պարտադրել սովորողին սեփական կարծիքը, հարկավոր է ամեն կերպ խթանել վերջինիս ինքնուրույնությունն ու քննադատական մտածողությունը: Հարկավոր է ու շատ կարևոր գեղարվեստական գրականության մեջ առկա դրական օրինակի օգնությամբ սովորողի մոտ բարձր արժեքներ ձևավերել: Որպեսզի ուսուցիչը կարողանա գրանցել հաջողություններ աշակերտներին կրթելու և դաստիարակելու գործընթացում, պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, վստահելի հարաբերություններ ձևավորի սովորողների հետ:

Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման կիրառի ժողովրդավարական սկզբունքներ, պահպանի բարոյահոգեբանական կայուն միջավայր: Սովորողի համար պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար: Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական

գրծընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք: Հարկավոր է գիտակցել աշակերտի մեջ բարձր մարդկային որակներ՝ արդարամտություն, ազնվություն, մարդասիրություն գտնելուն և ձևավորելու կարևորությունը, որոնց հասնելու ճանապարհին, վստահաբար, շատ կօգնի հայը, գրողը, մարդը, քաղաքացին, հայրենասերը, հումանիստը՝ հայ գրականությունն իր մեծերով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.bok.am/sites/default/files/2020-12/2.pdf Ն. Զեյնալյան, «անձի արժեհամակարգի ձեվավորման աշխարհայացքային նախադրյալները»:
2. Д. А Леонтев, «Развитие личностных ценностей в общественном контексте» Вестник Московского Университета,1997. №1.
3. https://vsu.am/grqer/2017/aprak/paremuzyaninna.pdf Ի. Փարեմուզյան, «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում»:
4. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
5. Վ. Ա Սուխոմլինսկի, «Սիրտս նվիրում եմ երեխաներին», Երևան, 1977:
6. https://www.arlis.am/documentview.aspx?docid=57923 ՀՀ Կառավարության որոշում:
7. http://www.hogeban.info/
8. https://escs.am/files/files/2021-05-06/1d10dc19d7adbb902d7a2ee54481cbc8.pdf «Հայ գրականություն»մ առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագիր:
9. Ստեփան Զորյան, «Իմ Թումանյանը» (հոդվածներ, ելույթներ, հուշեր), Երևան, 1969: